# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2267-Ա « 06 » մայիսի 2026 թ.

## ՆԵՐՔԻՆ ՉԱՐԲԱԽ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԻԾ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Սամվել Ստեփանյանի լիազորված անձ Մարիամ Ավագյանի դիմումը՝ Ներքին Չարբախ հասցեում գտնվող տնամերձ հողամասի սահմանները ճշտելու և հատակագիծ թողարկելու մասին:

Հարցի քննարկման համար հիմք են հանդիսացել «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի 2023 թվականի հուլիսի 6-ի հ.Հ-8409 արխիվային տեղեկանքը, Ն.Չարբախի կոլտնտեսության ընդհանուր ժողովի 1990 թվականի դեկտեմբերի 17-ի հ.4 արձանագրության քաղվածքը, 2023 թվականի սեպտեմբորի 12-ի ըստ օրենքի ժառանգության իրավունքի հ.20112 և հ.20113 վկայագրերը, իրավաբանական նշանակություն ունեցող փաստի հաստատման մասին 2025 թվականի նոյեմբերի 24-ի հ.37112 նոտարի որոշումը, Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 2026 թվականի մարտի 17-ի հ.ԱՏ-17032026-01-1091 տեղեկանքը, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2025 թվականի հուլիսի 15-ի հ.53/53.13/5189-2025 գրությունը:

Հարցի ուսումնասիրությունից և տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Ներքին Չարբախ հասցեում գտնվող տնամերձ հողամասի մակերեսը կազմում է 400.0քմ, որքան ամրագրված է Ն.Չարբախի կոլտնտեսության ընդհանուր ժողովի 1990 թվականի դեկտեմբերի 17-ի հ.4 արձանագրության քաղվածքում:

Քննարկվող՝ 400.0քմ մակերեսով հողամասն ընդգրկված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի հ.1023-Ն որոշմամբ հաստատված հավելվածների համաձայն՝ գտնվում է Երևան քաղաքի հողերի տարածագնահատման համաձայնեցված սխեմայի 10-րդ գոտում:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, հողային օրենսգրքի 52-րդ և 59-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի հ.1023-Ն որոշմամբ, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 01.04.2026թ. հ.Դ-18160-26 եզրակացությունը.

1. Սահմանել, որ Ներքին Չարբախ հասցեում գտնվող տնամերձ հողամասի սահմանները որոշվում են 400.0քմ մակերեսի համար սահմանված կարգով հաստատված հատակագծով:

2. Ընդունել ի գիտություն, որ համաձայն «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2025 թվականի հուլիսի 15-ի հ.53/53.13/5189-2025 գրության՝ հետագայում կառուցապատման աշխատանքներ իրականացնելիս հաշվի առնելով, որ քննարկվող հողամասում առկա պարիսպի արտաքին մասով անցնում է ցածր ճնշման d-57մմ տրամագծի վերգետնյա գազատար, իսկ պատի վրա ամրացված է հասցեն սնող հաշվիչ հանգույց անհրաժեշտ է պահպանել Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի ապրիլի 13-ի հ.539-Ն որոշման՝ գազաբաշխման համակարգի անվտանգության և շահագործման կանոնները, ինչպես նաև ՀՀՇՆ 42-01-2023 «Գազաբաշխիչ համակարգեր» շինարարական նորմերի պահանջները:

3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում:

4. Որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի վրա:

6. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

**ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**